Նկարում պատկերված Ջուլում Գրիգորյանը, Շահում Ղազարյանը, Ալբերտ Մկրտչյանը, Արման Մանարյանը, Անդրանիկ Հարությունյանը շատ հետաքրքիր պատմություններ կպատմեին երևանում երիտասարդ հասակում մեծ հեղինակություն վայելող Վարդգես Վարդանյանի (Կոնդի Վարդգես)և Կանո Մեխակիչի արկածների մասին (2005թ.):

Վահագն և Հասմիկ Հովնանյանները առանձնահատուկ ջերմությամբ են հյուրընկալում Հայաստանի իրենց բարեկամներին: Կարծում եմ, իմ պարագայում դա պայմանավորված էր նաև նրանով, որ ես և տիկին Հասմիկը երգրումցիների ժառանգներ ենք (1996թ.):

Եվրոպայի Անվտանգության և համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի նախագահ, ԱՄՆ կոնգրեսական էլսի Հաստինգսը որքան խիստ և սկզբունքային է ԵԱՀԿ 56 անդամ-երկրների պատգամավորների հետ նիստերը վարելիս, այնքան ջերմ ու սրտաբաց է ոչ պաշտոնական հանդիպումների ժամանակ: Անուշի և Արմենի աչքից չվրիպեց այն, որ Բրյուսելում է. Հաստինգսի միակ «թիկնապահներն» էին մի փխրուն աղջնակ՝ իր նրբակազմ փեսացուի հետ (հուլիս, 2006 թ., Բրյուսել):

Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Պետական դումայի պատգամավոր, հանրահայտ տնտեսագետ Սերգեյ Գլազևը՝ լինի դա ԵԱՀԿ-ն, «Պառլամենտականները գլոբալ գործողությունների համար» կամ էլ միջազգային հեղինակավոր այլ կառույցներ՝ նշտապես աչքի է ընկնում վերլուծական իր խոր ելույթներով: Բացառություն չէր նաև ԵԱՀԿ ԽՎ նիստում ունեցած նրա ելույթը: Ի այս տեսակետը բաժանում է նաև տնտեսագետ Անուշ Պլուզյանը (հուլիս, 2006 թ., Բրյուսել):



Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Էվանսը Ամերիկայի դեսպաններից առաջինն էր, ով Օսմանյան կայսրությունում 1915-1923 թթ. հայոց մեծ ողբերգությունը հրապարակավ որակեց որպես ցեղասպանություն: Սակայն տարօրինակ է, որ Հայաստանում գտնվեցին մարդիկ, ովքեր փորձեցին քաղաքական դաշտում սեփական անհաջողությունները բարդել մեր երկրում պրն Էվանսի վարած քաղաքականության վրա: Բարեբախտաբար, նման հարձակումներին նա մոտենում է հումորով: Հենց այդ հարցերի քննարկման պահն էլ պատկերված է լուսանկարում (հուլիս, 2006 թ., Երևան):

Մտավոր հսկայական կարողությունների տեր պետք է լինես, որ հանդգնես նորովի մեկնաբանել առաջյալներից ամենավիճահարույցի կերպարը: Եվ դա կարող էր անել Պերճ Ջեյրունցյանի նման արդարամիտ, հպարտ և հայրենասեր հայ մտավորականը (հուլիս, 2006 թ., Երևան):

Ճիշտ Արմենի հասակին էի, երբ հայրս ինձ տարավ Մոսկվա: Այնպես որ մեր ընտանիքի լավագույն ավանդույթները շարունակվում են (Մոսկվա, 1986 թ.):

Ցաղանդավոր գիտնական, բարձրագույն կրթության վաստակաշատ կազմակերպիչ, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի բազմամյա ռեկտոր Արծրուն Մարտիրոսի Գասպարյանից սովորում էին բոլորը՝ լինի ուսանող, դասախոս թե վարչական աշխատող: Անգամ իսկ իմ խստապահանջ ղեկան Վազգեն Գյուլխանդանյանը, ինստիտուտի աշխատակիցներ Սուրեն Անթաչյանը, Էլմիր Գևորգյանը չէին թաքցնում իրենց հպարտությունը, որ աշխատում են նրա ղեկավարության ներքո: Էլ չեմ ասում իմ հպարտության մասին (Երևան, մայիս, 1975 թ.):

Ցաղանդավոր վիրաբույժ, հոգատար ընկեր, ակադեմիկոս Սուրեն Ավդալբեկյանն առանձնահատուկ սեր ու հարգանք է վայելում մեր ընտանիքում: Լինելով հորս մտերիմը՝ 1980 թ. բարդագույն վիրահատությամբ փրկեց նրա կյանքը... (Ծորաղբյուր, 1998 թ.):

«Տիգրան Մեծ» ջոկատի հրամանատար Արմենակ Արմենակյանը, լինելով իմ լավ բարեկամը, առանձնահատուկ ջերմությամբ էր վերաբերվում որդիներիս, հատկապես իր աղաչին՝ Արմենին: Դեռ հայրենասիրական ինչքա՜ն գործերի հեղինակ կդառնար նա, եթե չլիներ ողբերգական 1999-ի հոկտեմբերի 27-ը (Երևան, 1991թ.):

երբ առիթ եղավ ավելի մոտիկից ծանոթացնել Մեր Մկրտչյանին Սուրեն Հարությունյանի հետ, երկուսի համար էլ ասես հայտնություն էր իրենց բնավորության գծերի ընդհանրությունը: Մեր Մկրտչյանի ներկայությունը մեծ ոգևորություն էր առաջացրել թե՛ տիկին Նինայի և թե՛ ամերիկահայ բարերար դոկտոր Վազգեն Նաջարյանի տիկնոջ՝ տիկին Մերիի մոտ (Երևան, 1991թ.):

երբ Անուշը տեսավ Հարավաֆրիկյան Հանրապետության գյուղերից մեկի ցեղապետի հետ լուսանկարս, բացականչեց. «Ի՞նչ լեզվով էիր հետը հաղորդակցվում»: Պատասխանս եղավ՝ նա հասկանում էր հայերեն և, կասկած առաջացավ, որ նրա ցեղը սերում է Վանի թագավորության հեռուհեռավոր շառավիղներից: Բնիկ վանեցիներ ի ժառանգ տիկինս հումորս չգնահատեց... (Հարավաֆրիկյան Հանրապետություն, օգոստոս, 2002 թ.):

Մասնագիտությամբ բժիշկ, սակայն ճակատագրի բերումով ձեռներեց դարձած Վահիկ Վարդանյանի տաղանդով հիացած եմ ոչ միայն նրա բարեկամներն ու մտերիմները, այլև՝ Բուլղարիայի քաղաքական ու բիզնես ընտրանին, ինչպես և արևմտաեվրոպական հագուստ արտադրող ամենահեղինակավոր ֆիրմաների տերերը: Դրա ականատեսը քանիցս եղել եմ նաև ես (Սոֆիա, 2001թ.):

Ընկերոջս՝ Լևոն Գրիգորևիչի տիկինը՝ Յուլյան, և նրանց զավակ Լյովան իրենց հնայքով ու ճարդկային ջերմությամբ, հաճեստությամբ գերում են շրջապատին: Նրանց հետ հաղորդակցվելիս երբեք չես մտածի, որ տիկին Յուլյան փառապանծ ճարշալ Համազասպ Բաբաջանյանի սիրելի թոռնուհին է (օգոստոս, 2005թ.):

Յուսիսային Ամերիկայի Արևմտյան ափի Կիլիկյան թեմի առաջնորդ Մուշեղ արքեպիսկոպոս Մարտիրոսյանն առանձնահատուկ հպարտությամբ էր խոսում իր թեմի հանախմբվածության և Հայաստանի Հանրապետության բարօրության համար զոհաբերության պատրաստակամության մասին (Լոս Անջելես, հուլիս, 2005թ.):

Մանիկոնիս և Ցոնային հարսանյաց հանդիսության նախապատրաստմանը ամենահոգատար վերաբերմունքը դրսևորեց մեր քավորկին Ցաքնիկ Կիրակոսյանը: Ավա՜ղ, դա եղավ այս լուսավոր, երջանկահիշատակ կնոջ վերջին մասնակցությունը մեր ընտանեկան հանդիսություններին: Ցատայի պակասը բոլորս ենք սրությամբ զգում (Երևան, ապրիլ, 2001 թ.):

Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ենթոնի Քենթորի հետ ծանոթացա լավ առիթով՝ եղիսաբեթ երկրորդ թագուհու հոբելյանի տոնակատարության ժամանակ (Երևան, հունիս, 2006 թ.):

Հայրս՝ պետական-կուսակցական հայտնի գործիչ Մանիկոն Գեղամյանը (1918-2002 թթ.): Մանկուց ականատես եմ եղել նրա անձնուրաց և ազգանվեր աշխատանքին: Սևարանում, ուր 1960-66 թթ. եղել է ՀԿԿ շրջկոմի 1-ին քարտուղար, թևավոր խոսքեր էին շրջում. Մանիկոն Գեղամյանը «կիրգուվի սապոգով» ինչպես եկավ, այնպես էլ գնաց՝ թողնելով ազնիվ ու բարի անուն, զարգացող գյուղատնտեսություն և արդյունաբերություն:

Ծնողներիս մասին ջերմ խոսք ասել՝ կնշանակի ոչինչ չասել...
Մայրս՝ Սոնյա Գեղամյանը, Հանրապետության վաստակավոր ուսուցչուհի է և 50 տարի մաթեմատիկա է դասավանդել (2001 թ.):

Տիկնոջս՝ Սնուշի, և որդիներիս՝ Մամիկոնի ու Արմենի հետ (1983 թ.):

Մշտապես իմ և Սնուշի ցանկությունն է եղել մեր որդիներին դաստիարակել հայրենասիրության ոգով: Լուսանկարվելով Ֆրեզնոյի գերեզմանատանը թաղված Սողոմոն Թեյլերյանի հուշակոթողի մոտ՝ դրանով իսկ ցանկացանք նրանց փոխանցել հայ նվիրյալի մշտավառ կերպարը (1991 թ.):

Հանծայնեք, Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի քաղաքապետի լուսանկարվելը ԱՄՆ Ուօքերթաուն քաղաքի գերեզմանատանը՝ Դրաստամատ Կանայանի (Դրոյի) շիրմաքարի մոտ, չլին ողջունի Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյում (սեպտեմբեր, 1990 թ.):

Տիկին Գայանեն Դրաստամատ Կանայանի այրին, չէր կարողանում թաքցնել թե՛ իր ուրախությունը, թե՛ իր զարմանքը իր օջախում՝ ԱՄՆ Ուօթերբաուն քաղաքում, հյուրընկալելով Խորհրդային Հայաստանի մայրաքաղաքի քաղաքապետին (սեպտեմբեր, 1990 թ.):

Որդիներիս՝ Մամիկոնի և Արմենի հետ (2000 թ.): Մեր տանը տղամարդկանց հանդիպումները թեև պարտադիր են, բայց և գաղտնիք չեն տիկին Անուշից:

Մամիկոնիս զինծառայությունն ավելի երկարատև թվաց թե Անուշին և թե Թամարին (2001թ.):

Արմենս զինծառայության ժամանակ արժանացել էր զորամիավորման հրամանատարների մշտական դրվատանքին, ինչն էլ առանձնակի ոգևորություն էր պատճառել մեր ընտանիքին (2003 թ.):

Որդուս Մամիկոնի և հարսիս Թամարի, հարսանեաց հանդեսի օրը (21.IV.2001թ.): Անուշը, վերջապես, ունեցավ սպասված աղջիկը...

1988 թ. Արարատյան թեմի փոխանորդ Գարեգին սրբազանը կատարեց Արմենիս կնքման արարողությունը. 16 տարի անց Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն օրհնում է նրան ուսման մեկնելուց առաջ: Մեր ընտանեկան արարողությունների մշտական մասնակիցն է Մամիկոնի և Թամարի բալորը՝ անվանի վիրաբույժ և լավ մարդ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հայրապետ Գալստյանը:

Տատիկն ու պապիկը ուղղում են իրենց սիսալը, այն է՝ թոռնիկին Արտաշիկին, ծանոթացնում են իրենց մեծ բարեկամ և ընտանիքին հարազատ դարձած մարդու՝ Կիմ Բալչիի հետ (2004 թ.):

Ինչպես տեսնում եք, աջ կողքիս Անուշը չէ. ԱՄՆ Վիրջինիա նահանգի Ալեքսանդրիայի քաղաքապետն է՝ բարեբար Ռիտա Բալյանի (ձախից) մտերմուհին (սեպտեմբեր, 1990 թ.):

Կարեն Դեմիրճյանի հետ հանդիպումներն առավել ուսանելի էին, երբ դրանք տեղի էին ունենում ընտանեկան հարկի տակ՝ ջերմ, անթոնազրոս մթնոլորտում: Տարիներ անց դրա պակասն առավել զգալի է դառնում...
(17. IV. 1997թ.):

Տաղանդավոր գեղանկարիչ Սլավա Պարոնյանի հետ շփվելը միշտ ուսանելի է եղել, թե՛ իմ և թե, կարծում եմ, Սամվել ու Ստեփան Դեմիրճյանների համար (1977թ.):

35 տարվա համատեղ աշխատանքը Ալեքսան Կարապետյանի հետ, երբ անգամ մեզ փոխել է, ապա միայն արտաքնապես (1974 թ.):

Մեր բանը, երևանյան երիտասարդների զբաղմունքը ֆուտբոլն էր, մեկ էլ «Մոսկովսկի» կոչված լողավազանում ամառային երկար օրերն անցկացնելը (1972 թ.):

Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսն իմ սերնդակիցների սրտերում և հիշողության մեջ անմոռանալի հետք է թողել: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանի բացման օրը (մայիս, 1990 թ.):

Թոռանս առաջ հպարտանալու մեկ առիթ ևս ունեմ. աշխատելով Երևանի քաղաքապետ որոշում եմ կայացրել հող հատկացնել Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կառուցման համար: «Մխրանքս» այն էր, որ այդ հարցի լուծումը, ՀՀ կառավարությունում 4 ամիս սառեցվելուց հետո, վերցրի ինձ վրա (ապրիլ, 1990 թ.):

Ամեն մարդու բախտը չի բերում լուսանկարվել Խրիմյան Հայրիկի ծոռնուհիների հետ. Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մարի Պլուզյանը և ճարտարագետ Անուշ Պլուզյանը (2003 թ.)

Թորգոմ պատրիարքը և խաժակ սրբազանն իրենց անթաքույց զարմանքը հայտնեցին, երբ Անուշը ցույց տվեց Խրիմյան Հայրիկի եզակի մատենագիր լուսանկարը: Զարմացել էին նաև տեր և տիկին Հովնանյանները (1991թ.):

Շինարարության տաղանդավոր երկու կազմակերպիչների՝ Լևոն Շահբազյանի և Գևորգ Հովնանյանի ընկերությունն ամենևին պատահական չէր: Առաջինը շենացնում էր Հայաստանը, երկրորդը՝ ԱՄՆ-ն, վերջին տարիներին էլ՝ Հայաստանը: Վեհափառ հայրապետ Վազգեն Առաջինի օրինանքն էլ անպակաս էր (1991թ.):

Էդիկները եղել են Երևանի մետրոպոլիտենի, Նորքի զանգվածների, Դավիթաշենի, Հարավ-արևմտյան թաղամասի կառուցողները: Ձախից աջ՝ Էդուարդ Հակոբյան, Սլավա Պարոնյան, Էդուարդ Կարապետյան, Էդուարդ Թադևոսյան: Ցավում եմ, որ նկարում չկա մեծ շինարար, իմ ավագ ընկեր Էդուարդ Բարսեղյանը (1999 թ.):

Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը մշտապես մեծ հոգատարությամբ էր վերաբերում Մաշտոցի շրջանում իրականացվող բուռն շինարարությանը: Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լևոն Մահակյանը և Մաշտոցի շրջգործկոմի նախագահ Ռաֆայել Արևշատյանը ևս ամագ ունեին այդ տարիներին Մաշտոցի շրջանում կատարված աննախադեպ կառուցապատման գործում (1998 թ.):

ՀՀ Գերագույն խորհրդի ղեկավարները, որպես կանոն, իրենց հյուրերին հրավիրում էին Երևանի քաղաքապետարան: Այդ ավանդույթին հետևեցին նաև Բաբկեն Արարքցյանը և Գագիկ Հարությունյանը՝ քաղաքապետարան բերելով Ֆրանսիայի Ազգային ասամբլեայի պատվիրակներին (օգոստոս, 1990 թ.):

Հայաստանի Կոմկուսի ղեկավարներ Գրիգոր Հարությունյանը, Անտոն Քոչինյանը և Կարեն Դեմիրճյանը եղել են հորս ամենապաշտելի մարդիկ: Բախտ եմ ունեցել անձամբ ծանոթ լինելու Անտոն Երվանդի Քոչինյանի և նրա ընտանիքի հետ: Կարծում եմ, նկարում պատկերված Աշոտ Մարդոյանի հայրը՝ ճանաչված և սիրված կուսակցական ու պետական գործիչ Անուշավան Մարդոյանը նույնպես բաժանում էր հորս այդ կարծիքը (1985թ.):

Միխայիլ Գորբաչովը 1990 թ. ապրիլին դեռևս օիծաղելու տրամադրություն ուներ: ԽՄԿԿ XXVIII համագումարից հետո պատգամավորներիցս քչերն էինք, որ կանխատեսում էինք ԽՍՀՄ-ի մոտալուտ փլուզումը:

Սպիտակի երկրաշարժից հետո ԽՄԿԿ քաղբյուրոյի անդամներ Ղոլզիխին և Լուկյանովին փորձեցին ցույց տալ նաև Հանրապետության ծաղկող շրջաններից մեկը: Հայաստանի կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանը հյուրերի հետ Երևանի Մաշտոցի շրջանում (դեկտեմբեր, 1988 թ.):

Պետական անվանի գործիչներ Կարեն Դեմիրճյանը և Ֆադեյ Սարգսյանը առանձնահատուկ ջերմությամբ էին լցված տաղանդավոր արվեստագետներ Սլավա Պարոնյանի և Սերգեյ Իսրայելյանի հանդեպ: Կարծում եմ, այդ զգացումը հավասարապես բաժանում են և տիկին Ռիմա, և Լուսինեն, անշուշտ, և ես (1994 թ.):

Գեներալ-լեյտենանտ Մարիուս Յուզբաշյանն անցել էր Հայրենական մեծ պատերազմի թոհուբոհով: Նրա հետ հանդիպումները մշտապես հետաքրքիր էին: Կարծում եմ՝ ՀԿԿ կենտկոմի 2-րդ քարտուղարի օգնական Օլեգ Սոաքելյանն ինձ հետ համամիտ կլինի (1986 թ.):

Գևորգ և Հրայր Հովհաննիսյանների հետ, բերևս, մեծ անակնկալ էր, որ Ատլանտյան օվկիանոսի այս ծունը կուլ տվեց հենց իմ գցած կարթը: Անհամբերտս ասաց. «Ի՞նչ է, ԱՄՆ-ում էլ ես պետք է Ձեզ միլիոնատեր եղբայրներիդ, ձկով պատվեմ»: է՛, մեր բախտն էլ էդպես դասավորվեց (1996 թ.)

Ալեք Մանուկյանը և Նուբար Փաշան մեծագույն այն հայերից էին, որոնց իմաստության և անձնուրացության շնորհիվ ասիմիլյացիայից փրկվեց Սիլիցիան՝ պահելով իր պատմամշակութային դիմագիծը: Ավելին տարիներ անց Հանրապետության դժվար օրերին մենք մշտապես զգում էինք սիլիցիաբահայության օգնությունը և համերաշխությունը (սեպտեմբեր, 1990 թ.):

Լուսանկարվելուց առաջ Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ Լուիզ-Սիմոն Մանուկյանը, որն անգնահատելի օգնություն ցուցաբերեց Հայաստանի աղետի գոտուն, կատակում էր՝ ասելով. Արտաշես, երջանիկ մարդ ես, որ մեր ընտանիքի բոլոր անդամներին «բռնացրեցիր իրար հետ» (1990 թ.):

Մարսելի քաղաքապետ պրոֆեսոր Վիգուռուն վերջապես հնարավորություն ունեցավ ոչ միայն տեսնել, այլև ծանոթանալ ու լուսանկարվել հայ ֆիդայու, այն էլ «Վրիժառուների» հրամանատարի՝ Վրեժի հետ (մայիս, 1990 թ.):

Խարբերդի կոտորածներից մազապուրծ հայ ընտանիքի զավակ, ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի պառլամենտի խոսնակ Ջորջ Գվերյանը առաջին անգամ Հայաստան այցելեց 1991 -ին: Տպավորությունները սքանչելի էին բոլորիս համար, բացառությամբ Մանվել Քոչարյանի, որը հարկադրված էր մեկ շաբաթվա ընթացքում երկու անգամ փոխել Գվերյանի քաշին չդիմացած ռեսորները:

Հպարտությունս անսահման էր, երբ տեղեկացա, որ ԱՄՆ Դետրոյթ քաղաքում կա մեծն Կոմիտասի հուշարձանը: Հարգանքս, թերևս, կարողացա արտահայտել Դետրոյթի քաղաքապետի հետ հուշարձանի պատվանդանին ծաղկեզամբյուղ դնելով (սեպտեմբեր, 1990 թ.):

Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրայի հետ հանդիպումներն ուղեկցվում էին հետաքրքիր քննարկումներով (2000 թ.):

Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Պիտեր Թոմսոնի հետ հանդիպումներն առավել հետաքրքիր անցան Վաշինգտոնում (հունիս, 1996 թ.):

ԱՄՆ դեմոկրատական կուսակցության հայտնի կոնգրեսական Դենիս Կուսենիչը արտաքին վերաբերմունք է դրսևորում ոչ միայն իր երկրի խնդիրների, այլև գլոբալ մարտահրավերների հաղթահարման գործում (սեպտեմբեր, 2002 թ.):

ԱՄՆ կոնգրեսական Չիմ Մոռանի ընտրության գործում ես էլ լուսա ունեմ (սեպտեմբեր, 1990 թ.):

ԱՄՆ սենատոր Թոմ Հարկինը չափազանց լավ տեղեկացված է Հայաստանի և հայերիս մասին: Նրա հետ հանդիպումները «Պառլամենտականները գլոբալ գործողության համար» միջազգային խորհրդարանական կազմակերպության համաժողովներում մշտապես անցնում են գործնական և ջերմ, մարդկային մթնոլորտում (դեկտեմբեր, 2004 թ., Նոր Զելանդիա):

Լորդ Ռասել Զոնսթոնը Հայաստանի համար բախտորոշ պահերին առանձնահատուկ դերակատարություն է ունենում լինի դա մեր երկրի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին, լինեն ԼՂՀ-ի հիմնահարցի առաջիկա քննարկումները (ապրիլ, 2005 թ.):

ԱՄՆ կոնգրեսական Ստենլի Հոյեռը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի ամենաազդեցիկ գործիչներից է: 1990 թ. նրա հետ ծանոթանալիս չէի կարող ենթադրել, որ 15 տարի անց նրա հետ կրկին կհանդիպեմ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովում (սեպտեմբեր, 1990 թ.):

ՀՀ-ում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Պանայոտիս Ջորդաֆոսը և տիկին Հելլենին տիկին Սիդայի թարգմանությունների շնորհիվ Հայաստանը նմանեցրին հունական գյուղի (հուլիս, 2001թ.):

Բոստոնի քաղաքապետ Ռեյ Ֆլինը տպավորված , անգամ ցնցված էր, երբ իմացավ Հայոց ցեղասպանության մանրամասները (մարտ, 1990 թ.):

Հանդիպումները Սիլվա Կապուտիկյանի և Կիմ Բակշիի հետ վերածվում են մեր կյանքի մասին մտորումների և կենսահույզ հարցերի պատասխանների որոնման: Մնում ես զարմացած՝ ինչպես կարող է Կիմը՝ օտարազգի՝ մեծ մտավորականը, այդքան խորանալ հայ մարդու հոգու խառնարանում (2002 թ.):

Ժողովրդական նկարիչ Ջուլում Գրիգորյանը ծանր ու դժվարին կյանք է ունեցել, բայց բնավորությամբ մնացել է բարի և սրտացավ, խոհեմ ու իմաստուն: Դրա վկայությունն են արևշատ, վառ կտավները (2005 թ.):

Մշտապես բարձր եմ գնահատել և ուսանելի համարել «Երևանի» հարգված տղերքի հատկապես Ֆելիքս Դանիելյանի, Ռուբիկ Հարությունյանի և Ռուդոլֆ Խաչատրյանի հետ իմ մտերմությունը (1994 թ.):

Հրանտ Մաթևոսյանի մեծությունն ու խորությունը հատկապես սուր են ընկալվում, երբ վտանգված է լինում Հայրենիքը: Կարծում եմ, իմ այս գնահատականի հետ համաձիտ կլինեն Ալեքսան Կիրակոսյանը, Ռազմիկ Դավոյանը և Ալեքսանդր Չիթչյանը (1993 թ.):

Համո Սահյանի հետ իմ բոլոր հանդիպումները յուրովի են տպավորվել հիշողությանս մեջ: Ես բախտավոր ու երջանիկ եմ, որ լուսանկարվելուց հետո Վարպետն ինձ ծաստանկից դարձրեց միգուցե իր կյանքի ամենահուզիչ հանդիպումներից մեկին... (հունիս, 1991 թ.):

Համո Սահյանը, ականատես լինելով որդիներիս ժիրությանը և նրանց ուղղված իմ հիացական հայացքին, ժպտալով, հոգոց քաշելով զգուշացրեց. «Նախիրկն ու Արայիկը քոնոնց նման աշխույժ ու ժիր էին: Տես, հա, քաշելիք ունես...» (1991 թ.):

Ցավում եմ, որ այս հանդիպումը չի տեսագրվել. անմոռանալի, հուզիչ երեկո էր... (1992 թ.):

Ժողովրդական տաղանդավոր նկարիչ Էդուարդ Իսաբեկյանի հետ շփումները, ասես թե, փոխադրում էին քեզ 20-րդ դարասկիզբ: Սուրմալու նահանգի անմոռաց Իգդիր քաղաքը... (2003 թ.):

Արցախի հերոս Սամվել Բարայանը, որքան ահագին է թշնամու համար, այնքան բարեսիրտ ու ջերմ է բարեկամների համեմատ (1997 թ.):

Մեր Մկրտչյանի հետ բանալիճելը դյուրին գործ չէր անգամ Մ. Գորբաչովի «մտերիմ բարեկամ» Հենրիկ Իգիթյանի համար (1995 թ.):

Տիկին Միլվայենց տան հանդիպումներն առավել բուռն ու հետաքրքիր էին անցնում, երբ դրանց մասնակցում էին Հրաչյա Հովհաննիսյանը, Ռաֆայել Ղազարյանը, Սոս Սարգսյանը... Շիկացած մթնոլորտը հաջողվում էր մեղմել միայն Ռուբեն Մաթևոսյանի քնքուշ երգերով (1999 թ.):

Երբեք պատահականություն չեմ համարում, որ 1991թ. հուլիսին Լոս Անջելեսի Բևերլի Հիլզ թաղամասում ծանոթացա իմ ամենահամակրելի դերասանուհու՝ Էլիզաբեթ Թեյլորի հետ: Հե՛յ, գիտի ջահելություն...

Էլիզաբեթ Թեյլորի գրավչության գնահատման հարցում, ինչպես տեսնում եք, որդիս Արմենը, համաձիտ է ինձ հետ (1991 թ.):

Խորեն Բարկենիչ Արրահամյանը. մեր քաղաքից մի մեծ զարդ պակասեց... (2004 թ.):

Ակադեմիկոս Արմեն Գալոյանը, արվեստաբան Հենրիկ Իգիթյանը և ես տպավորված էինք ոչ միայն ՍՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Հարրի Գիլմորի ինտելեկտով, այլև տիկին Գիլմորի երաժշտական-կատարողական բարձր արվեստով (1994 թ.):

Համո Սահյանի և գեղանկարիչ Ռաֆայել Աբոյանի հետ սա իմ վերջին հանդիպումն էր: Վարպետը հեռացավ կյանքից, իսկ շնորհալի նկարիչը Հայաստանից... Հեռանում են լավ մարդիկ, հեռանում... (1992 թ.)

Կարճ ժամանակ անց Ռուբեն Հախվերդյանը բարեհաջող կվիրահատվի: Կարծում եմ, Սպարտակ Բգնունու Փարիզում մտաբերած պատմություններն առանձնապես նրան չտխրեցրին (1992 թ.):

Մաեստրո Լորիս Ճգնավորյանը Հայաստան գալու առաջին իսկ օրից դարձավ մեր ընտանիքի ամենացանկալի հյուրը և բարեկամը:

երբ Երևանի «Հրազդան» հյուրանոցի բակում հանդիպեցի մեր ստեղծագործող մտավորականներին և Լևոն Հախվերդյանին, ակամայից բացականչեցի. «Ես Երևանի բոլոր լավ մարդիկ իրար գլխի եմ հավաքվել, խեր լինի»: Դրան ակադեմիկոսը հակադարձեց. «Արտաշես, մի ծայր արա, նկարվենք» (1991թ.):

Մաեստրո Ջիվան Գասպարյանի հետ բարեկամությունս ավելի քան 20 տարվա պատմություն ունի: Տարբեր երկրներում ականատես եմ եղել, թե ինչպես է նա իր կախարդական դուդուկով հուզել հազարավոր մարդկանց (մայիս, 2002 թ.):

Տարիներ անց. մտորելու և խորհելու ժամանակներ... (2004 թ.):

Մոսկվայաբնակ, բայց բնիկ երևանցի, հայտնի ծեռներեց Լևոն Մարկոսի հետ հանդիպումները մշտապես եղել են շատ հետաքրքիր: Հայրենասեր հայ մարդ,որն իրավամբ արժանի է դառնալ Լեռնային Ղարաբաղի պատվավոր քաղաքացի և որի մեծագույն ավանդը դարաբաղյան ազատամարտում դեռ կգտնի իր տարեգրին (2000թ.):

Որքան էլ անցնեն տարիները, երևանցիներս մշտապես հարգանքով ենք արտասանելու իր «ճիշտը պահած» Ֆեդոսեև Վոլոդյայի, ընկերոջ համար կյանքը չխնայող Իոսիֆ Հարությունյանի, ծեծահոգի և բարեսիրտ Ճարմիկ եպիսկոպոսյանի, սրտացավ ընկեր Պետրոս Հարությունյանի, ընկերության շտապօգնության դերը ստանձնած պրոֆեսոր Նորիկ Լուսինյանի անունները:

Ինքս Հարություն Մուրադյանից ոչ պակաս հպարտություն եմ ապրում, երբ տեսնում եմ մարտունեցիների ամենաջերմ ու հարգալից վերաբերմունքը թե նրա և թե Մուրադյանների ընտանիքին: Մժ «Ազգային Միաբանություն» խմբակցության պատգամավորները իրական հեղինակություն են վայելում ժողովրդի ամենալայն շրջաններում:

Խոստովանեմ, եթե չլիներ իմ լավ ընկեր, բարեկամ, ճանաչված գիտնական և հմուտ խմբագիր-հրատարակիչ Անուշավան Զաքարյանի տքնաջան աշխատանքը, սրտացավությունն ու հետևողականությունը այս գիրքը հազիվ թե լույս աշխարհ գար: Չեմ կարող չարտահայտել իմ երախտիքի խոսքը, հարգելի Անուշավան, խորին շնորհակալություն:

2004թ. ապրիլի 12-ի լույս 13-ի գիշերը չլինեին Եսայան Հայկը, Հարությունյան Վահրամը, Մկրտչյան Գարրին և Դավթյան Արմանը, ապա համոզված կարող եմ ասել, որ ես, եթե փրկվեի, լավագույն դեպքում կդառնայի հաշմանդամ: Անձնազոհությունն էլ հենց այն է, որ մահակով հարվածների տարափ ես ստանում մարմնիդ, գլխիդ վրա և արնաշաղախ փրկում ընկերոջդ:

Լուսանկարում Ձեզ արդեն ծանոթ դեմքերից զատ Մանվել Քոչարյանն է, Աղավարդ Բարսեղյանը և Տիգրան Պոշնակյանը: 1990թ. մայիսի 27-ին Մանվելը, խորհրդային զրահամեքենաների սպառնալի ազդանշաններն անտեսելով, արիաբար ինձ հասցրեց բանակի շտաբ: Կանխվեց արյունահեղությունը: Իսկ Աղավարդը և Տիգրանը վերջին տարիներին հազարավոր կիլոմետրեր անտրտունջ կտրեցին ինձ հետ Հանրապետությունով մեկ: Եվ շատ հաճախ այդ ճանապարհը վտանգավոր էր ...

«Ազգային Միաբանություն կուսակցությունը» 2004 թ. ապրիլյան իրադարձություններից հետո դարձավ էլ ավելի կուռ և համախմբված:

Հայերս մի մեծ ընտանիք ենք, և Աստված թող օրհնի բոլորիս... (2004 թ.):

Լուսանկարում պատկերված են մեր բակի մեծերը՝ Ռոբերտ Հովեյանը և Ֆելիքս Մելոյանը, որոնց ուսերին բազմել եմ ես: Մարդկային ճակատագրեր. Հովեյանը (նույն ինքը՝ կինո «Նաիրիի» Օրոն) ունեցավ ծանր կյանք... Ֆելիքս Մելոյանն էլ, թերևս, մերօրյա ամենահեղինակավոր գրաքննադատն է: Սակայն երկուսին միավորում էր այն, որ թույլ չէին տալիս բակի երեխաներից որևէ մեկի թաստիքին կպչեն (1954 թ.):

Խորհրդային Միության ցանկացած խոշոր քաղաքում, ասես թե, քեզ պաշտպանված էիր զգում, եթե տեղացի հեղինակավոր մարդկանց ներկայանում էիր իբրև Նորայր Թադևոսյանի (Ռիի Նորիկ) մտերիմը: Լինելով Նորիկի կուրսեր եղբոր՝ Ալիկ Թադևոսյանի ընկերը, մեկ-երկու անգամ օգտվել եմ այդ հանգամանքից: Երևանցիները մեծ կորուստ ունեցան Նորիկի մահով. նրա պակասը մեզանում խիստ զգացնել է տալիս (1976 թ.):

Լուսանկարվելու պահին, դիմելով պարոններ Գեորգ Հովհաննիսյանին և Ջորջ Գլերյանին, ասացի. «Արդյոք գիտե՞ք, թե ինչ է Ձեզ պակասում լիակատար երջանկության համար, - և, չսպասելով նրանց պատասխանին, շարունակեցի. - Պատկերացնում եք, հանկարծ, որ Դուք էլ Ֆադեյ Տաճատիչի, Էմիլ Սամսոնիչի, Լևոն Կարապետիչի, մեր Արմոյի, էլ չեմ ասում իմ նման երևանցի լինեիք»: Իմ այս «լուսագությունը» առաջացրեց հավաքվածների ծիծաղը, պահն էլ որսաց լուսանկարիչը (սեպտեմբեր, 1991թ.):

Մշտապես հիացել եմ Էմիլ Սարոնեի ներքին մեծագույն տակտով և խոհեմությամբ. հենց այդպիսին էլ պետք է լիներ մեծատաղանդ բանաստեղծ Արմենակ Սարոնեի որդին: Կանային ուժեղ հատկություններ ունեցող մարդկանց հատուկ է հոգու խաղաղությունը, ինչի մարմնավորումն էր ինձ համար նաև իմ լավ բարեկամ Կոստայի պահվածքը փարիզյան բազմաթիվ հանդիպումների ժամանակ (Փարիզ, հուլիս, 2004 թ.):

Աշտարակս հիացած ես մնում, թե ծգողական ինչ մեծ ուժ ունի Սիլվա Կապուտիկյան անհատականությունը: Նրան հավատարիմս միշտ և երկրպագում են առողջապահության տարաբնույթ կազմակերպիչ Լիդիա Սուրադյանը, ժողովրդական դերասանուհի Ժենյա Ավետիսյանը, փայլուն մանկավարժ Ժաննա Ծաղիկյանը, չնորհալի երգիչ և ասմունքող Կարեն Միրզոյանը, հանրաճանաչ և սիրված Վերա Հակոբյանը, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, հայ պոեզիայի մեծ գիտակ Ավետանա Խանումյանը. բոլորս, բոլորս, բոլորս... (2004 թ.):

Աշխարհահռչակ երգչուհի Հասմիկ Պապյանի ամուսինը՝ գերմանացի ճանաչված արվեստագետ Կոնրադը և վերջինիս ծնողները հաճելիորեն զարմացան, երբ Հացավան գյուղում իդեալական գերմաներենով իրենց ողջունեց շնորհալի գիտնական, դոկտոր Վաչագան Վարդանյանն իր չքնաղ տիկնոջ՝ Պիլար Գոմես Վարդանյանի հետ: Ինձ մնում էր միայն բացականչել. «Սնուշիկ, քրոջ տղա և հարս ունես՝ աշխարհը չունի» (հունիս, 2005 թ.):

Հրաչիկ Սաթևոսյան. մեր փիրելի Հրաչո. որքա՜ն հոգս ու մտածմունք կա քո հայացքում... և ինչքա՜ն հպարտ պետք է լինի մեր ազգը, որ տվել է Հրանտ, Հրաչիկ և Համլետ Սաթևոսյաններ (2005 թ.):

Մաեստրո Օհան Դուրյանն այն եզակի երաժիշտներից է, որը պարծանք ու պատիվ կրերեր անգամ իսկ երաժշտական հանճարներ ծնած Գերմանիային, Ավստրիային... Ավա՛ղ, Դուրյանները, Կապուտիկյանները, Գուրզադյանները... պահանջված չեն Հայաստանի այսօրվա իշխանությունների կողմից: Բայց արգելել մեզ հպարտանալ նրանցով, երջանիկ զգալ, որ նրանց ժամանակակիցն ես, առավել ևս բարեկամը, ի զորու չէ ոչ ոք (2004 թ.):

Երբ մուտիկից ես շփվում Գրիգոր Գուրզադյանի հետ, ինքդ քեզ հարց ես տալիս. երբ մեկ այլ ազգ ի դեմս մեկ անձի ունենար մեծատաղանդ նկարիչ, փառահեղ էսսեիստ, տաղանդավոր ճարտարապետ-կոնստրուկտոր և աշխարհահռչակ տիեզերագետ գիտնական, անկասկած կասեիր՝ գործ ունենք նորօրյա Լեոնարդո դա Վինչիի հետ: Եվ սա չափազանցություն չէ (2005 թ.):

Հարազատ դարձած վաղեմի երկու ընկեր, մեծատաղանդ երկու քանդակագործ՝ Արա Շիրազը և Յուրի Պետրոսյանը, իրենց մաքրությունը, ասես թե, մարմնավորել են կերտած փառահեղ արձաններում: Չի կարելի անտարբեր անցնել Արայի՝ Հովհաննես Շիրազի, Յուրիի՝ Արամ Խաչատրյանի և նրանց ստեղծած տասնյակ այլ հուշակոթողների կողքով (Բուժական, 2005 թ.):

Արտերկրներում գործուղումների ժամանակ քեզ ավելի վստահ ես զգում, երբ խոսք է գնում ժամանակակից կերպարվեստի մասին: Այս առաջարեգում, իրավամբ, հպարտանալու շատ բան ունենք: Սայիս Միփթարյանը նկարչական իր յուրահատուկ ոճով, հմտորված եմ, միջազգային ցուցահանդեսներում նորովի ճանաչել կտա ժամանակակից հայ կերպարվեստը (2005 թ.):

ԵՄԳԿ խորհրդարանական վեհաժողովի նախագահ, ԱՄՆ կոնգրեսական էլսի Հաստինգը կարծես թե բաժանում է հայաստանյան պատվիրակության ոգևորությունը, որ պայմանավորված էր ԼԳՀ-ի հարցում աղրբեջանական բանաձևի տապալումով (հուլիս, 2005 թ.):

Մեծատաղանդ երգչուհի Ֆլորա Սարտիրոսյանը քնարական «դուդուկի» իր ձայնով հմայել է ոչ միայն հայաստանցիներիս, այլև աշխարհաստիրուտ հայությանը: Սվետլանա Ամիրխանյանը շուրջ 15 տարի ապրելով Միացյալ Նահանգներում հավատարիմ մնաց մեր Գալատի (Քյավառի) ժողովրդին հատուկ հյուրասիրությանն ու մարդկային ջերմությանը, որով էլ գերել է ամերիկացիների սրտերը: Նրանք երկուսն էլ մեծապես նպաստեցին, որ ԱՄՆ կատարած իմ գործուղումը լիներ առավել արդյունավետ (հուլիս, 2005 թ.):

Մենք՝ հայերս, անակնկալ մատուցել սիրող զարմանալի ժողովուրդ ենք. Կալիֆորնիայի Գլենդել քաղաքի ամենաշքեղ «Հիլտոն» հյուրանոցի անձնակազմի համար էլ էր հաճելի, երբ ավանդական զուռնա-դհոլով, լավաշ հացով ու աղով դիմավորում էին ձեր խնամարի ծառային: Միակ մտածմունքս այն էր, որ հանդիպումներիցս հետո հազարավոր հայրենակիցներս վճռականորեն տրամադրվեն Հայրենիք վերադառնալու համար (2005 թ.):

Լուսանկարում պատկերված Համլետ Ներսեսյանը, Արամայիս Դարիբյանը, Արկադի Բաղրամյանը, Հրահատ Գևորգյանը, Մկրտիչ Համբարձումյանը և Գագիկ Խոջասարյանը (որը, ավա՜ղ, լուսանկարման պահին մեզ հետ չէր) կազմակերպեցին կալիֆորնյան հեռուստակայաններով ուբուկես ժամ ուղիղ եթերով հանդես գալու հնարավորությունը: Դա գոհացրեց ոչ միայն ինձ, այլև կողքիս կանգնած Ֆլորա Մարտիրոսյանին (հուլիս, 2005 թ.):

Ամերիկյան իմ հանդիպումներից, թերևս, ամենահուզիչը Գլենդելի «Նարեկ» կրթահամալիրի աշակերտության հետ էր: Հայաստանի Հանրապետությանն ուղղված երդման արարողության բառերն անհնար էր ունկնդրել առանց հուզմունքի: Կարծում եմ, չէր խանգարի, եթե այդ տեքստը ուղեցույց դառնար հայաստանյան պաշտոնյաների համար (հուլիս, 2005 թ.):

Ստանիսլավ Հովսեփյանն արտադրության այն եզակի կազմակերպիչներից է, որն ապացուցեց, որ աշխատող մարդը ցանկացած հասարակարգում վայելում է մարդկանց հարգանքը: Սակայն, երբ նա անհայտացավ է ընկերության հանդեպ: Կարծում եմ, ասածս նաև Կորյուն Աստաբելյանը կիսաստատի (2005 թ.):

Ռուբեն Բոշյանը, Եղիշե Հովհաննիսյանը, Էդուարդ Թումանյանը և Սոնյա Գասպարյանը մեր կուսակցության ստեղծման առաջին օրից կանգնած են եղել իմ թիկունքին: Անցել է ութ տարի կրկին միասին ենք (2005 թ.):

Նիկոլայ Ասատուրիչը և Հանդեռ Նիկոլյանը, շնորհիվ իրենց սկզբունքայնության ու բացառիկ հանարձակության, 1995 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում փակեցին ընտրակեղծիքների ճանապարհը Դավթաշենի ընտրատարածքում, որտեղից էլ ընտրվեցի Ազգ պատգամավոր: Դա անհնար կլիներ, եթե 1990 թ. մայիսի 27-ին «Արարատ» ջոկատի հիմնադիրներից Արմեն Ամիրյանը չկանխեր մահացու վտանգը, որը ծառացել էր իմ, Ռուբեն Գևորգյանի, Սացոյի, Վարդանի և Սանվելի գլխին Սովետաշենի արյունահեղ դեպքերի ժամանակ (2005 թ.):

1980-ականների վերջին Գագիկ Թադևոսյանի և Գարեգին Մնոյանի հետ մեր համեստ լուման ենք ունեցել Երևանի կառուցապատման գործում: Այսօր էլ միասին պայքարում ենք Հայաստանի լուսավոր գալիքի համար (2005 թ.):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում «Ազգային Միաբանություն կուսակցության» ներկայացուցիչ Ջավեն Պլուզյանը յուրովի ստանձնել է «Ջակոն Իվանիչի» դերակատարումը: Այդ առումով բախտավոր եմ, շուրջբոլորս լինի Գարեգին Մնոյանը, Կոլյան Առաքելյանը, թե ԱՄ կուսակցության նախագահության ցանկացած անդամ, բոլորն էլ օրինապահ են (2005 թ.):

Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ, մինչև վերջերս Եխխով Եվրոպական ժողովրդական կուսակցություններ/ քրիստոնյա-դեմոկրատներ խմբակցության ղեկավար Ռենե վան դեր Լինդենի հանդեպ անակնկալ էր, որ ես, լինելով այդ խմբակցության անդամ, սկզբից ևեթ մեղմեցի սպասվելիք թեժ քննարկումները՝ իրեն նվիրելով հեղինակաշնչ գիրքը (օգոստոս, 2005 թ.):

Տաղանդավոր գեղանկարիչ Վարուժան Վարդանյանն այլի է ընկնում ոչ միայն իր կտավների յուրովի գունաշխարհով, այլ նաև օժտված է բանաստեղծական-քնարական շնչով: Հանդիպումներն այս խորաբովանդակ մարդու, արվեստագետի հետ՝ փիլիսոփայելու և մտորելու լուրջ տեղիք են տալիս (սեպտեմբեր, 2005 թ.):

Մեծատաղանդ արվեստագետներ, ՀՀ ժողովրդական դերասաններ Շահուն Դազարյանը և Ալբերտ Մկրտչյանը, արվեստի վաստակավոր գործիչներ Երվանդ և Արման Մանարյանները հորս հորաքրոջ որդիները, Հայաստանի ժողովրդական նկարիչ Զուլում Գրիգորյանը և հայկական ֆուտբոլի լեգենդ Սարգիս Հովհաննիսյանը առանձնահատուկ շուք հաղորդեցին գրքիս շնորհանդեսին (14.IX.2005 թ.):

Հայաստանի Հանրապետությունում Հնդկաստանի արտակարգ և լիազոր դեսպան Դիպակ Վոհրան իր տաղանդավոր, խոհեմ ժողովրդի արժանավոր զավակն է... (14.IX.2005 թ.):

Նշանավոր քյավառցիներ Ռազմիկ Գեորգիի Ջախարյանը (Ջախարենց Ռազմիկը) և Սարգիս Մուրադիանյանը իրենց եությամբ յուրահատուկ ջերմություն են սփռում շրջապատի վրա (2005 թ.):

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տաղանդավոր մաթեմատիկոս, փայլուն շախմատիստ Վանիկ Ջաքարյանը մշտապես զարմացրել է իր կանային բարձր հատկանիշներով (2005 թ.):

Արցախի ազատագրական պատերազմի հերոսներ Հակոբ Հակոբյանը, Ալբերտ Բազեյանը և Սրմեն Ամիրյանը զերադասում են լռել իրենց բարգագործությունների մասին մեզ ստիպելով հարգանքով լցվել իրենց հանդեպ (2005 թ.):

Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Անտոնիոս Վլավիանոսի հետ ծանոթանալու պահից հաստատվեցին գործընկերային ամենաջերմ հարաբերություններ: Ինձ ուրախացրեց նրա մասնակցությունը գրքիս շնորհանդեսին (14.IX.2005 թ.):

ՀՀ վաստակավոր գործիչ Գեորգի Գարեգինի Սաստրյանը շատ ու շատ սկսնակ արվեստագետների ճակատագրում ունեցել է խիստ դրական դերակատարում և, ինչպես խոստովանում են մեր օրերում արդեն մեծ ճանաչում ունեցող գործիչները և հատկապես կինոարվեստի, "Դեղձ Ժորա"-ն ծնողի պես հոգատար է եղել իրենց հանդեպ (2005 թ.):

Գրքիս շնորհանդեսին իրենց մասնակցությամբ ինձ շատ ուրախացրեցին ՀՀ վաստակավոր ուսուցիչներ, մորաքույրս Անժելա Չամանյանը, ամուսինը Գագիկ Սամվելյանը, Կառլեն Քալաշյանը, ինչպես նաև իմ լավ բարեկամներ, օպերայի և բալետի երիտասարդ, տաղանդավոր մենակատարներ, ամուսիններ Կարեն Միրզոյանը և Լիլիթ Սողոմոնյանը (14.IX.2005 թ.):

Գրքիս շնորհանդեսին Հայաստանի ժողովրդական երգիչ, մեծատաղանդ Ռուբեն Մաքսոյանի մասնակցությունն առանձնահատուկ ոգևորություն առաջացրեց դրա մասնակիցների շրջանում: Կարծում եմ, Ռուբենի հարևանությամբ կանգնած Համբարձում Սուրադյանը և Մարիամ Պողոսյանը կբաժանեն իմ կարծիքը (14.IX.2005 թ.):

«Ազգային Միաբանություն կուսակցությունը» իր շարքերում ունի թե Սերժ Սարգսյան և թե Ռոբերտ Քոչարյան: Ինձնից աջ կանգնած Սերժը և ձախից կանգնած Ռոբերտը հանդիպած են մեր արդարացի պայքարի հայրենակի մեջ (14.IX.2005 թ.):